«Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3-5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10-26

Ընկերության գտնվելու վայրը	ՀՀ,ք. Երևան, Շիրակի 2/5
Իրավական ձևը	Փակ բաժնետիրական ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը	Շինանյութերի արտադրություն և վաճառք
Գլխավոր տնօրեն	Մինաս Ժամակոչյան

Հեռ՝ +37460 528899
Էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ հարկ, տարածք 7

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ի մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 31.12.2022թ. դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագրությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրեցրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Մենք հավատում ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Այլ հանգամանքներ

Նախորդ աուդիտը իրականացվել է այլ աուդիտորի կողմից՝ 31 դեկտեմբեր 2021թ.-ին ավարտվող հաշվետու ժամանակաշրջանների համար, որի գծով 2022թ. հունիսի 22-ին արտահայտվել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, և այնպիսի ներքին վերահսկողության համար, ինչպիսին որ ղեկավարությունը անհրաժեշտ է համարում ունենալ՝ խարդախության կամ սխալի պատճառով էական խեղաթյուրումից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Հեռ.՝ +37460 528899
Էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- հատկորոշում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա եզրահանգում ենք, թե արդյոք տեղին է հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառումը ղեկավարության կողմից և, թե՝ արդյոք առկա է էական անորոշություն՝ Ընկերության անընդհատ գործելու կարողությունը նշանակալի կասկածի տակ դնող դեպքերի կամ պայմանների հետ կապված: Եթե գտնում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները համարժեք չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագայում տեղի ունեցող դեպքերը կամ ի հայտ եկող հանգամանքները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններում իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Հեռ. +37460 528899
Էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տրամադրում ենք նաև հավաստիացում, որ պահպանել ենք անկախությանը վերաբերող էթիկայի պահանջները և տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, կիրառելի լինելու դեպքում, ռիսկերը վերացնելու կամ անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք առավել նշանակալի էին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր

Վահագն Յակոբյան
Տնօրեն

Դավիթ Եդիգարյան
Առաջադրանքի ղեկավար

29 հունիսի, 2023թ.
ք.Երևան

	Ծնթ.	31.12.2022թ. հազար դրամ	31.12.2021թ. հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	5,121,986	1,685,311
Ոչ նյութական ակտիվներ	5	27,897	12,971
Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճարներ		157,428	40,817
Հետաձգված հարկային ակտիվներ	12.2	-	52,258
		5,307,311	**1,791,357**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	1,637,678	1,425,278
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	679,943	970,960
Տրված փոխառություններ		1,340	83,000
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	281,647	154,638
		2,600,608	**2,633,876**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**7,907,919**	**4,425,233**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	9.1	856,000	181,000
Վերագնահատման պահուստ	9.2	2,301,767	-
Կուտակված շահույթ		1,197,083	1,104,573
		4,354,850	**1,285,573**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ստացված վարկեր և փոխառություններ	10	693,130	1,745,784
Հետաձգված հարկային պարտավորություններ	12.2	271,734	-
		964,864	**1,745,784**
Ընթացիկ պարտավորություններ			
Ստացված վարկեր և փոխառություններ	10	428,591	143,526
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	1,944,769	1,187,312
Շահութահարկի գծով պարտավորություն	12.1	214,845	63,038
		2,588,205	**1,393,876**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**7,907,919**	**4,425,233**

Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները (էջ 6 - 26) հաստատվել են ղեկավարության կողմից 29.06.2023թ. և թույլատրվել հրապարակման համար, ստորագրությամբ՝

Մինաս Ժամակոչյան
Գլխավոր Տնօրեն

Վալերիկ Հարությունյան
Գլխավոր հաշվապահ

	Ծնթ.	2022թ.	2021թ.
		հազար դրամ	հազար դրամ
Հասույթ	13	9,532,633	7,475,219
Վաճառքի ինքնարժեք	14	(6,480,281)	(4,771,765)
Համախառն շահույթ		**3,052,352**	**2,703,454**
Իրացման ծախսեր	15	(1,280,326)	(969,342)
Վարչական ծախսեր	16	(765,391)	(593,224)
Գործառնական և այլ ծախսեր	17	(393,234)	(81,344)
Գործառնական և այլ եկամուտներ	18	712,684	284,293
Գործառնական շահույթ		**1,326,085**	**1,343,837**
Ֆինանսական ծախսեր	19	(159,252)	(167,427)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից (վնաս)/օգուտ		216,445	67,578
Շահույթ մինչև հարկումը		**1,383,278**	**1,243,988**
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	12	(190,768)	(157,815)
Զուտ շահույթ		**1,192,510**	**1,086,173**
Այլ համապարփակ արդյունք	21	**2,301,767**	-
Ընդամենը համապարփակ արդյունք		**3,494,277**	**1,086,173**

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	Ընդամենը
	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ
Մնացորդն առ 1 հունվարի 2021թ.	**145,500**	**918,400**	**-**	**1,063,900**
Տարվա շահույթ	-	1,086,173	-	**1,086,173**
Կանոնադրական կապիտալի ավելացում	35,500	-	-	**35,500**
Շահաբաժիններ	-	(900,000)	-	**(900,000)**
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2021թ.	**181,000**	**1,104,573**	**-**	**1,285,573**
Տարվա շահույթ	-	1,192,510	-	**1,192,510**
Կանոնադրական կապիտալի ավելացում	675,000	-	-	**675,000**
Շահաբաժիններ	-	(1,100,000)	-	**(1,100,000)**
Այլ համապարփակ արդյունք	-	-	2,301,767	**2,301,767**
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.	**856,000**	**1,197,083**	**2,301,767**	**4,354,850**

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	1,192,510	1,086,173
Մաշվածություն և ամորտիզացիա	358,030	242,452
Հիմնական միջոցի օտարումից վնաս	131	(1,861)
Ներված պարտավորություն	(22,472)	-
Դեբիտորական պարտքի դուրսգրումից ծախս	2,065	916
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստ	73,446	-
ԱԱՀ-ի փոխհատուցումից եկամուտ	(370,570)	(124,905)
Շահութահարկի գծով ծախս	190,768	157,815
Ֆինանսական եկամուտ/ծախս	159,252	167,427
Վարկերի տոկոսների փոխհատուցումից եկամուտ	(35,730)	(74,155)
Փոխարժեքային տարբերությունից շահույթ/վնաս	(216,445)	(74,221)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	**1,330,985**	**1,379,641**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	369,378	(525,971)
Պաշարների փոփոխություն	(212,400)	(356,442)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	757,458	610,460
Գործառնական գործունեությունից ստացված/ օգտագործված զուտ դրամական միջոցներ	**2,245,421**	**1,107,688**
Վճարված տոկոսներ	(118,388)	(164,294)
Վճարված շահութահարկ	(220,235)	(242,184)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**1,906,798**	**701,210**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում, զուտ	(1,001,173)	(299,147)
Տրված ոչ ընթացիկ կանխավճարների փոփոխություն	(116,611)	(39,817)
Տրամադրված փոխառություն, զուտ	(81,660)	(7,000)
Ներդրումային գործ. համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(1,199,444)**	**(345,964)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Կապիտալի համալրում	225,000	35,500
Շահաբաժնի վճարում	(244,608)	(713,000)
Վարկեր և փոխառություններ, զուտ	(560,284)	307,096
Ֆինանսական գործ. համար ստացված զուտ դրամական միջոցներ	**(579,892)**	**(370,404)**
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**127,462**	**(15,158)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(453)	(6,628)
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	154,638	176,424
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	**281,647**	**154,638**

1.Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

Էֆֆեկտ Գրուպ ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 24.02.2016 թվականին:
Գրանցվել է Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների ռեգիստրում՝ 2016թ. փետրվարի 24-ին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (պետական գրանցման համարը՝ 80.120.889317, ՀՎՀՀ՝03317278):

Ընկերության ստեղծման նպատակը ինքնուրույն, իր ռիսկով տնտեսական գործունեություն իրականացնելը և այդ գործունեությամբ շահույթ ստանալն է:

Ընկերության հիմնական գործունեությունն է շինանյութերի (ներկերի, չոր շաղախների, բետոնե բլոկների, սալիկների, եզրաքարերի) արտադրությունը և վաճառքը:

2022թ. աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 342 մարդ (2021թ.՝ 321 մարդ):

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, քաղաք Երևան, Շիրակի 2/5:

(բ) Հայաստանի գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է հիմնականում Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2022թ. փետրվարի 4-ին Ռուսաստանը ռազմական գործողություններ է սկսել Ուկրաինայում: Ռուսաստանին հակազդելու համար Եվրոմիությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգները, ինչպես նաև աշխարհի այլ երկներ, տնտեսական և քաղաքական պատժամիջոցներ են կիրառում Ռուսաստանի նկատմամբ, ինչի հետևանքով Ռուսական տնտեսությունը զգալի խնդիրների առաջ է կանգնել: Ներկայումս, ռազմական գործողությունների ընթացքը, պատժամիջոցների ազդեցությունն ու հետևանքների չափը անկանխատեսելի են: Հաշվի առնելով Հայաստանի վրա Ռուսաստանի քաղաքական և տնտեսական ազդեցությունը, ինչպես նաև այն փաստը, որ երկիրը Ռուսաստանի մասնակցությամբ Եվրասիական տնտեսական միության անդամ է, նրա իրավիճակը կարող է անուղղակիորեն ազդել Հայաստանի ֆինանսական-տնտեսական կայունության վրա:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գնահատականն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմքերը

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն:

(բ) Անընդհատության հիմունք

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքի հիման վրա, ինչը ենթադրում է, որ Ընկերության ակտիվները կիրացվեն և պարտավորությունները կմարվեն Ընկերության բնականոն գործունեության ընթացքում՝ առանց որևէ մտադրության Ընկերության գործունեությունը տեսանելի ապագայում դադարեցնելու կամ Ընկերությունը լուծարելու

(գ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով: Բացառություն են կազմում իրական արժեքով չափվող ներդրումներըև վերագնահատված գումարով չափվող շենքեր, շինություններ և կառուցվածքները և հողամասերը:

(դ) Չափման և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթ ՀՀ դրամն է (դրամ): Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(ե) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ

Պաշարների զուտ իրացվելի արժեքի գնահատում

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու անսաթվի դրությամբ դիտարկում է արդյոք պաշարների զուտ իրացվելի արժեքը պակաս չէ դրանց ձեռքբերման արժեքից և նման դեպքերի հայտնաբերման դեպքում պաշարները չափում է դրանց զուտ իրացվելի արժեքով: Գնահատումները հիմնվում են հետհաշվեկշռային ժամանակահատվածի ուսումնասիրության, ինչպես նաև մոտ ապագայում շուկայում ակնկալվող փոփոխությունների վերաբերյալ Խմբի ղեկավարության ակնկալիքների վրա:

Հիմնական միջոցների օգտակարության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակարության ժամկետները հիմնված են ղեկավարության դատողությունների վրա և ապագայում կարող են փոփոխվել (Ծան. 3): Յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածում ընկերության ղեկավարությունը վերլուծում և անհրաժեշտ դեպքում փոփոխում է գնահատականները, կապված հիմնական միջոցների մնացորդային օգտակարության ժամկետների հետ:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

(ա) Հասույթ

Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում Ընկերության սովորական գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն ներհոսքն է, որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի:

Ընկերությունը ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչում է, երբ գնորդին է փոխանցվել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը, Ընկերությունը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն և ո՛չ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն, հասույթի գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել, ինչպես նաև հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն և գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

(բ) Արտարժույթով գործարքներ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթից բացի այլ արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային ակտիվների և պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Տարեվերջի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված պաշտոնական փոխարժեքները կազմում էին: ԱՄՆ դոլար 1.0 = 393.57 ՀՀ դրամ, 1.0 եվրո = 420.06 ՀՀ դրամ, 1.0 ՌԴ ռուբլի = 5.59 ՀՀ դրամ (31 Դեկտեմբերի 2021: 1.0 ԱՄՆ դոլար = 480.14 ՀՀ դրամ , 1.0 եվրո =542.61 ՀՀ դրամ, 1.0 ՌԴ ռուբլի = 6.42ՀՀ դրամ):

(գ) Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները (բացառությամբ անշարժ գույքի) սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Հիմնական միջոցների միավորի ինքնարժեքը ձեռքբերման արժեքից բացի ընդգրկում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները և հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման սկզբնապես գնահատված անխուսափելի ծախսումների գումարը:

Շենքերը, շինությունները, կառուցվածքները և հողամասերը, հետագայում չափվում են իրական արժեքով՝ որակավորված մասնագետի կողմից կատարված գնահատումների հիման վրա: Հողամասերի ու շենքերի վերագնահատումից առաջացած իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ եկամտում և կուտակվում են վերագնահատման պահուստում, բացառությամբ այն դեպքի, երբ արժեքի նվազումը գերազանցում է վերագնահատման պահուստի կրեդիտային մնացորդը (կամ նման գործարքի հակառակ տարբերակը). այս դեպքում գերազանցող մասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հողամասերի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների գծով մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ ակտիվները ավարտուն են և պատրաստ օգտագործման:

Մնացած բոլոր հիմնական միջոցների գծով հաշվարկվում է մաշվածություն՝ դրանց հաշվեկշռային արժեքը ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում բաշխելու նպատակով

Մաշվածության հաշվարկման համար օգտագործվում են հետևյալ տոկոսադրույքները.

Շենքեր, շինություններ	20 տարի
Կառուցվածքներ	7-20 տարի
Մեքենաներ, սարքավորումներ	1-8 տարի
Տրանսպորտային միջոցներ	1-8 տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	1-7 տարի
Այլ հիմնական միջոցների դասեր	1-8 տարի:

(դ) Պաշարներ

Պաշարները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով, իսկ հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, փոխարկման և պաշարները ներկայիս գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Համանման բնույթ և կիրառություն ունեցող բոլոր պաշարների ինքնարժեքի որոշման համար կիրառվում է ինքնարժեքի առաջին մուտք՝ առաջին ելք (FIFO) բանաձևը:

(ե) Պահուստներ

Ընկերությունը ճանաչում է ժամկետի կամ գումարի առումով անորոշ պահուստներ: Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ներկա պարտավորությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:
Երբ ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն գումարի ներկա արժեքը, որը, ակնկալվում է, որ կպահանջվի այդ պարտականությունը մարելու համար: Ձեղչման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

(զ) Բաժնետիրական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

Ընկերության սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալի գործիքներ:

(է) Շահութահարկի գծով ծախս

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ հարկից:

Ընթացիկ շահութահարկը (հարկը) ընթացիկ ժամանակաշրջանի կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթի գծով վճարման ենթակա հարկ է:

Ընկերությունն ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթից վճարվելիք հարկի գծով ճանաչում է ընթացիկ հարկային պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարվելիք գումարը, Ընկերությունն այդ գերազանցող մասը ճանաչում է որպես ընթացիկ հարկային ակտիվ:

Ընկերությունն ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունը (ակտիվը) չափում է այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի հարկային մարմիններին (կփոխհատուցվի հարկային մարմինների կողմից)՝ կիրառելով հարկերի դրույքները և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել մինչև հաշվետու ամսաթիվը:

Ընկերությունն ընթացիկ հարկային պարտավորության կամ ընթացիկ հարկային ակտիվի փոփոխությունները ճանաչում է շահույթում կամ վնասում՝ որպես հարկի գծով ծախս:

(ը) Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները ճանաչվում են այն դեպքում, երբ ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում տարբերվում է դրա հարկային բազայից:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքերում, երբ հավանական է, որ հասանելի կլինի հարկվող շահույթը, որի դիմաց կարող է օգտագործվել տարբերությունը:

Ակտիվի կամ պարտավորության չափը որոշվում է `օգտագործելով հարկային դրույքաչափերը, որոնք ուժի մեջ են մտել կամ ըստ էության ուժի մեջ են մտնելու հաշվետու ամսաթվի դրությամբ, և ակնկալվում է, որ կիրառվելու են հետաձգված հարկային պարտավորությունները / (ակտիվները) մարելիս / (վերականգնել):

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները փոխհատուցվում են, երբ Ընկերությունն ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները փոխհատուցելու իրավաբանորեն կիրառելի իրավունք ունի, իսկ հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները վերաբերում են նույն հարկային մարմնի կողմից գանձվող հարկերին:

4. Հիմնական միջոցներ

	Շենքեր, շինություններ, կառուցվածքներ հազ. դրամ	Հողամասեր հազ. դրամ	Մեքենաներ և սարքավորումներ հազ. դրամ	Տրանսպորտային միջոցներ հազ. դրամ	Անավարտ շինարարություն հազ. դրամ	Այլ հիմնական միջոցներ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
նական արժեք/ գնահատված արժեք							
ցորդն առ 01.01.2022թ.	**730,612**	**139,289**	**660,237**	**695,056**	**17,465**	**66,355**	**2,309,013**
ացումներ	150,823	444,289	73,378	70,486	77,037	161,772	**977,785**
ելեցումներ	-	-	-	(2,100)	(720)	(1,203)	**(4,023)**
գնահատումից աճ	1,470,406	1,336,627	-	-	-	-	**2,807,033**
ցորդն առ 31.12.2022թ.	**2,351,841**	**1,920,205**	**733,615**	**763,442**	**93,782**	**226,924**	**6,089,808**
ակված աածություն							
ցորդն առ 01.01.2022թ.	**27,764**	**-**	**271,896**	**300,855**	**-**	**23,188**	**577,327**
ավ ծախս	48,930	-	113,497	123,774	-	60,254	**346,455**
ելեցումներ	-	-	-	(1,469)	-	(866)	**(2,335)**
ցորդն առ 31.12.2022թ.	**76,694**	**-**	**385,393**	**423,160**	**-**	**82,576**	**921,447**
ն հաշվեկշռային արժեք							
ցորդն առ 31.12.2021թ.	**702,848**	**139,289**	**388,342**	**394,200**	**17,465**	**43,167**	**1,685,311**
ցորդն առ 31.12.2022թ.	**2,275,147**	**1,920,205**	**348,222**	**340,282**	**93,782**	**144,348**	**5,121,986**

Հիմնական միջոցների գծով սահմանափակումներ

Բանկային վարկերը ապահովելու նպատակով Ընկերությունը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի գրավադրված 3,990,634 հազար դրամի սկզբնական հիմնական միջոցներ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 773,572 հազար դրամի):

Իրական արժեքի չափում-հիմնական միջոցների վերագնահատում

Ընկերության շենքերի, շինությունների ու հողամասերի վերագնահատված արժեքը չափվել է անկախ գնահատողի՝ «Վի-Էմ-Ար Փի» ՍՊԸ-ի կողմից կատարված իրական արժեքի գնահատման հիման վրա:

Հիմնական միջոցների վերագնահատումը իրականացվել է 31.12.2022թ· դրությամբ

Շենքերի և շինությունների, հողամասերի իրական արժեքը որոշվել է գնահատման ծախսային մեթոդով:

Ընկերության անշարժ գույքը չափվում է վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման ամսաթվով իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և հետագա կուտակված արժեզրկումը:

Զրո հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցներ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության լրիվ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմել է 10,440 հազ. դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 49,185 հազ. դրամ):

5. Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչ. ծրագրեր հազ. դրամ	Լիցենզիաներ և վստահագրեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Սկզբնական արժեք			
Մնացորդն առ 31.12.2021թ.	**6,675**	**13,688**	**20,363**
Ավելացումներ	-	26,502	26,502
Նվազեցումներ	-	(8,438)	(8,438)
Մնացորդն առ 31.12.2022թ.	**6,675**	**31,572**	**38,427**
Կուտակված մաշվածություն			
Մնացորդն առ 01.01.2021թ.	**3,706**	**3,686**	**7,392**
Տարվա ծախս	903	10,673	11,575
Նվազեցումներ	-	(8,438)	(8,438)
Մնացորդն առ 31.12.2022թ.	**4,609**	**5,921**	**10,530**
Զուտ հաշվեկշռային արժեք			
Մնացորդն առ 31.12.2021թ.	**2,969**	**10,002**	**12,971**
Մնացորդն առ 31.12.2022թ.	**2,066**	**25,830**	**27,897**

6. Պաշարներ

	31.12.2022թ. հազ. դրամ	31.12.2021թ. հազ. դրամ
Հումք և նյութեր	1,389,133	1,227,872
Պատրաստի արտադրանք	209,885	172,688

Ապրանքներ	28,558	15,400
Հանքարդյունահանման արտադրանք	10,102	9,318
	1,637,678	**1,425,278**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունն ունի գրավադրված շրջանառության մեջ գտնվող ապրանքանյութական արժեքներ:

7. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2022թ. հազ.դրամ	**31.12.2021թ. հազ.դրամ**
Առևտրային դեբիտորական պարտքեր	635,922	466,498
Հանած՝ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը	(73,446)	-
Առևտրային դեբիտորական պարտքեր (զուտ)	**562,476**	**466,498**
Տրված ընթացիկ կանխավճարներ	102,401	299,296
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	14,633	194,542
Այլ դեբիտորական պարտքեր	433	10,624
	679,943	**970,960**

Ստորև ներկայացված է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստի շարժը.

	2022 հազ. դրամ	**2021 հազ. դրամ**
Մնացորդ առ 1-ը հունվարի	-	-
Պահուստին հաշվերգրումներ	73,446	-
Մնացորդ առ 31-ը դեկտեմբերի	**73,446**	**-**

8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2022թ. հազ.դրամ	**31.12.2021թ. հազ.դրամ**
Բանկային հաշիվներ, ՀՀ դրամով	271,992	146,994
Բանկային հաշիվներ, արտարժույթով	1,037	2,128
Դրամարկղ	8,618	5,516
	281,647	**154,638**

9. Սեփական կապիտալ

9.1 Կանոնադրական կապիտալ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 856,000 հազար դրամ, որը բաղկացած է 2 բաժնեմասից: Ընկերության մասնակիցներն են՝

Մասնակցի անուն	**Բաժնեմասերի արժեք**	**Բաժնեմասի տոկոսը**
Սամվել Բեգլարյան	564,000	65.89%
Արև Բեգլարյան	292,000	34.11%
	856,000	100.00%

9.2 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստը առաջացել է հիմնական միջոցների (անշարժ գույք) վերագնահատման արդյունքում (ծնթ. 4):

10. Ստացված վարկեր և փոխառություններ

	Արժույթ	Մարման ժամկետ	Դրույք (%)	31.12.22թ հազ. դրամ	31.12.21թ. հազ.դրամ
Չապահովված փոխառ. կապակցված կողմից	ՀՀ դրամ	31/12/2023	11.5	276,233	-
Չապահովված փոխառ. կապակցված կողմից	ՀՀ դրամ	15/08/2023	Անտոկոս	72,001	-
Չապահովված փոխառ. կապակցված կողմից	ԱՄՆ դոլար	31/12/2023	9	79,457	-
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ԱՄՆ դոլար	26/05/2027	9	31,174	-
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ԱՄՆ դոլար	22/03/2029	9	94,418	-
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ԱՄՆ դոլար	10/02/2027	9.5	15,357	-
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ԱՄՆ դոլար	16/12/2026	9	21,499	96,383
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ԱՄՆ դոլար	11/12/2026	9	42,755	220,881
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ԱՄՆ դոլար	25/11/2027	9	18,730	57,400
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ԱՄՆ դոլար	18/12/2026	9	17,116	90,439
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ԱՄՆ դոլար	04/10/2030	9.5	101,941	209,765
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ՀՀ դրամ	18/10/2024	11.4	230,339	355,674
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ՀՀ դրամ	08/09/2027	8.5	31,100	35,450
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ՀՀ դրամ	08/09/2027	8.5	31,100	35,450
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ՀՀ դրամ	08/09/2027	8.5	31,100	35,450
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ՀՀ դրամ	08/09/2027	8.5	20,591	10,392
Լիզինգ առևտրային հաստատություն	ՀՀ դրամ	14/08/2024	9	6,810	9,375
Լիզինգ առևտրային հաստատություն	ՀՀ դրամ	23/07/2024	9	-	12,765
Ապահովված վարկեր ունիվերսալ վարկային կազմակերպություն	ՀՀ դրամ	26/03/2031	12	-	350,375
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ՀՀ դրամ	15/08/2024	13	-	189
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ՀՀ դրամ	01/04/2022	9	-	139,412
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ՀՀ դրամ	03/10/2022	3	-	8,993
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ԱՄՆ դոլար	27/12/2023	11	-	112,158
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ԱՄՆ դոլար	02/11/2022	11	-	16,377
Ապահովված վարկեր առևտրային բանկեր	ԱՄՆ դոլար	20/04/2022	12	-	92,382
				1,121,721	**1,889,310**

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Ապահովված վարկեր և փոխառություններ	1,121,721	1,889,310
	1,121,721	**1,889,310**
Որից.		
Վարկեր, երկարաժամկետ մաս	693,130	1,745,784
Վարկեր, կարճաժամկետ մաս	428,591	143,526
	1,121,721	**1,889,310**

Բոլոր առևտրային բանկերից ստացված վարկերը ապահովված են անշարժ և շարժական գույքով, շրջանառության մեջ գտնվող ապրանքանյութական պաշարներով, ինչպես նաև Ընկերության կողմից տրամադրված երաշխավորությամբ (ծնթ. 4,6):

11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2022թ. հազ.դրամ	31.12.2021թ. հազ.դրամ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	249,020	244,709

Առևտրային կրեդիտորական պարտքեր հիմնական միջոցների գծով	325,080	494,872
Ստացված կանխավճարներ	74,799	38,401
Հարկեր և սոցիալական վճարներ	100,622	88,441
Կրեդիտորական պարտքեր մասնակիցներին	1,029,518	187,000
Արձակուրդային վճարումների գծով պահուստ	95,403	70,921
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	70,327	62,968
	1,944,769	**1,187,312**

12. Շահութահարկի գծով ծախս

	2022թ. հազ.դրամ	2021թ. հազ.դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս	372,042	199,532
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում	(181,274)	(41,717)
	190,768	**157,815**

Համաձայն ՀՀ Հարկային Օրենսգրքի շահութահարկի տոկոսադրույքը 2022 թվականին կազմել է 18% (2021: 18%).

12.1 Ընթացիկ հարկի գծով պարտավորություն

	31.12.2022թ. հազ.դրամ	31.12.2021թ. հազ.դրամ
Տարեսկզբի մնացորդը	**63,038**	**105,690**
Տարվա ծախս	372,042	199,532
Վճարում	(220,235)	(242,184)
Տարեվերջի մնացորդը	**214,845**	**63,038**

12.2 Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները արտացոլված են հետևյալ հոդվածներում.

հազար դրամ

	Ակտիվ		Պարտավորություն		Զուտ արժեք	
	31.12.2022	31.12.2021	31.12.2022	31.12.2021	31.12.2022	31.12.2021
Հիմնական միջոցներ	229,580	39,492	(505,266)	-	(275,686)	39,492
Դեբիտորական պարտքեր	-	-	(13,221)	-	(13,221)	-
Կրեդիտորական պարտքեր	17,173	12,766	-	-	17,173	12,766
Զուտ հարկային ակտիվներ, (պարտավորություններ)	**246,753**	**194,495**	**(518,487)**	**-**	**(271,734)**	**52,258**

Հետաձգված հարկերի շարժը

դրամ *հազար*

2022	Մնացորդ 01.01.2022թ. դրությամբ	Ճանաչված շահույթում կամ վնասում	Ճանաչված սեփական կապիտալում	Մնացորդ 31.12.2022թ. դրությամբ
Հիմնական միջոցներ	39,492	190,088	-	229,580
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	(505,266)	(505,266)
Արձակուրդների պահուստավորում	12,766	4,407	-	17,173
Դեբիտորական պարտքերի պահուստավորում	-	(13,221)	-	(13,221)
Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	**52,258**	**181,274**	**(505,266)**	**(271,734)**

հազար դրամ

2021	Մնացորդ 01.01.2021թ. դրությամբ	Ճանաչված շահույթում կամ վնասում	Մնացորդ 31.12.2021թ. դրությամբ
Արձակուրդների պահուստավորում	12,023	743	12,766
Հիմնական միջոցների գծով	(1,482)	40,974	39,492
Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	**10,541**	**41,717**	**52,258**

13. Հասույթ

	2022թ. հազ.դրամ	2021թ. հազ.դրամ
Ապրանքների վաճառքից	9,351,677	7,303,339
Արտադրանքի վաճառքից	38,024	91,042
Ծառայությունների մատուցում	142,932	80,838
	9,532,633	**7,475,219**

14. Վաճառքի ինքնարժեք

	2022թ. հազ.դրամ	2021թ. հազ.դրամ
Վաճառված ապրանքների ինքնարժեք	6,348,828	4,595,026
Իրացված ապրանքների ինքնարժեք	45,658	139,669
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	85,795	37,070
	6,480,281	**4,771,765**

15. Իրացման ծախսեր

	2022թ. հազ.դրամ	2021թ. հազ.դրամ
Աշխատանքի վարձատրության ծախսեր	409,088	301,111
Մարկետինգի և գովազդի ծախսեր	325,552	255,764
Տրանսպորտային ծախսեր	276,339	203,468
Վառելիքի ծախսեր	234,434	171,149
Ապահովագրական և խորհրդատվական ծախսեր	11,594	10,084
Գործուղման ծախսեր	8,370	5,216
Կապ, կոմունալ և գրասենյակային ծախսեր	5,437	4,369
Մաշվածության և ամորտզացիայի ծախսեր	4,199	1,836
ՀՄ նորոգում և սպասարկում	486	21
Միջնորդավճարների ծախսեր	10	13,547
Այլ ծախսեր	4,817	2,777
	1,280,326	**969,342**

16. Վարչական ծախսեր

	2022թ. հազ.դրամ	2021թ. հազ.դրամ
Աշխատանքի վարձատրության ծախսեր	299,400	188,706
Հաղորդակցման,կոմունալ և գրասենյակային ծախսեր	134,040	135,174
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	118,025	127,530
Տրանսպորտային ծախսեր	59,530	61,520
Նորոգման և սպասարկման ծախսեր	20,056	17,196
Աուդիտորական և խորհրդատվական, սպասարկման ծախսեր	37,965	21,017
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	23,249	12,488
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	16,546	10,658
Վարձակալության ծախսեր	15,583	500
Բանկային ծառայության ծախսեր	11,171	7,387
Մարքեթինգի, գովազդի ծախսեր	8,289	3,462
Այլ ծախսեր	21,537	7,586
	765,391	**593,224**

17. Գործառնական և այլ ծախսեր

	2022թ. հազ.դրամ	2021թ. հազ.դրամ
Պաշարների իրացումից	240,313	2,096
Դեբիտորական պարտքի դուրս գրում	75,511	916
Արտարժույթի փոխարկումից ծախս	23,725	12,707
Անհատույց տրված ակտիվներ	18,760	18,682
ՀՄ մաշվածություն և ամորտիզացիա	17,163	10,145
Ծախսեր տույժերից, տուգանքներից	16,642	4,652
Հիմնական միջոցների օտարումից վնաս	631	31,760
Արժեքների փչացումից,պակասորդից	184	166
Այլ ծախսեր	305	220
	393,234	**81,344**

18. Գործառնական և այլ եկամուտներ

	2022թ. հազ.դրամ	2021թ. հազ.դրամ
Պաշարների վաճառքներից եկամուտներ	235,617	6,471
ԱԱՀ-ի փոխհատուցումից եկամուտ	370,570	124,905
Վարկերի տոկոսների սուբսիդավորումից եկամուտ	35,990	74,155
Վարձակալությունից եկամուտ	23,555	9,259
Ներված պարտավորություն	22,472	-
Արտարժույթի փոխարկումից եկամուտ	13,050	173
Վնասի փոխհատուցումից եկամուտներ	9,414	1,434
Հիմնական միջոցների օտարումից շահույթ	500	33,621
Այլ	1,516	34,275
	712,684	**284,293**

19. Ֆինանսական ծախսեր

	2022թ. հազ.դրամ	2021թ. հազ.դրամ
Տոկոսային ծախսեր	159,252	167,427
	159,252	**167,427**

20. Կապակցված կողմերի միջև գործարքներ

Առևտրային գործարքներ

Ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը կապակցված կողմերի հետ իրականացրել է հետևյալ առևտրային գործարքները.

Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

	2022թ. հազ.դրամ	2021թ. հազ.դրամ
Աշխատավարձ և պարգևատրումներ	91,236	49,017
	91,236	**49,017**

Գործարքներ մասնակիցների հետ

Գործարքներ	2022թ. հազ.դրամ	2021թ. հազ.դրամ

Շահաբաժինների հայտարարում	1,100,000	900,000
	1,100,000	**900,000**

Մնացորդներ	**31.12.2022թ. հազ.դրամ**	**31.12.2021թ. հազ.դրամ**
Շահաբաժինների մնացորդ	1,029,518	187,000
	1,029,518	**187,000**

Գործարքներ կապակցված կազմակերպությունների հետ

Գործարքներ	**2022թ. հազ.դրամ**	**2021թ. հազ.դրամ**
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում	777,721	118,721
Ապրանքների իրացում և ծառայությունների մատուցում	67,062	14,622
Փոխառությունների տրամադրում	-	139,500

Մնացորդներ	**31.12.2022թ. հազ.դրամ**	**31.12.2021թ. հազ.դրամ**
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	381,511	600,821
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	49,242	28,798
Տրամադրված փոխառություններ	-	83,000
Ստացված փոխառություններ	355,689	-

21. Այլ համապարփակ արդյունք

	31.12.2022թ. հազ.դրամ	**31.12.2021թ. հազ.դրամ**
Շենքերի, շինությունների, կառուցվածքների և հողամասերի վերագնահատման արդյունք	2,807,033	-
Հետաձգված հարկային պարտավորություն	(505,266)	-
	2,301,767	**-**

22. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:
Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(i) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր
- Ստացված վարկեր և փոխառություններ

(ii) Ֆինանսական գործիքներ կատեգորիաներով

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

	Ծնթ.	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	7	635,922	466,498
Տրված փոխառություններ		1,340	83,000
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	281,647	154,638
		918,909	**704,136**

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ

	Ծնթ.	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	11	574,100	739,581
Ստացված փոխառություններ	10	1,121,721	1,889,310
		1,695,821	**2,628,891**

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Ընկերության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է անկանխիկ վաճառքից:
Պարտքային ռիսկն առաջանում է նաև դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, ինչպես նաև ժամկետային ավանդներից:

<u>Պարտքային ռիսկի ազդեցությունը Ընկերության գործունեության վրա</u>

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը սահմանափակվում է Ընկերության վերոհիշյալ ֆինանսական ակտիվներով, որոնք ամբողջությամբ ծագել են ներքին շուկայից:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության արտարժութային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է արտարժութային փոխարժեքի (արտարժութային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության գործարքներն արտահայտված չեն գործառնական արժույթով, այսինքն՝ երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից:

Ընկերությունն ունի մի շարք արտարժույթով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Քանի որ այդ պարտավորությունները գերազանցում են ակտիվները, արտարժույթի փոխարժեքային տատանումները կարող են որոշակի ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա :

Ստորև ներկայացվում են արտարժույթով արտահայտված ակտիվները և պարտավորությունները համարժեք գումարով (հազ. դրամ).

	ԱՄՆ դոլար		Եվրո		Ընդամենը	
	2022 Հազ. դրամ	2021 Հազ. դրամ	2022 Հազ. դրամ	2021 Հազ. դրամ	2022 Հազ. դրամ	2021 Հազ. դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	76,376	259,943	11,495	50,321	87,871	310,264
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,018	-	18	96	1,036	96
Առևտրային կրեդիտորական պարքեր	(46,938)	(31,600)	(24,428)	(90,027)	(71,366)	(121,627)
Ստացված փոխառություններ	(429,257)	(1,057,338)	-	-	(429,257)	(1,057,338)
Զուտ դիրք	**(398,801)**	**(828,995)**	**(12,915)**	**(39,610)**	**(411,716)**	**(868,605)**

Զգայունության վերլուծություն

Եթե ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվեր 5%-ով, Ընկերության կապիտալը 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազեր 16,351 հազար դրամով (2021թ.՝ 33,989 հազար դրամ): Այս վերլուծությունը ենթադրում է, որ մնացած բոլոր փոփոխականությունները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող կապիտալի կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

23. Պայմանական պարտավորություններ

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերության ապրանքները, հիմնական միջոցները, բացառությամբ հողմասերի ապահովագրված են: Սակայն Ընկերությունը ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց:

Իրավական պարտավորություններ

Ընկերության ղեկավարությունը տեղյակ չէ Ընկերության դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգը համեմատաբար նոր է և հատկանշական է հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ: Վերջինս հաճախ հստակ չէ, հակասական է և պահանջում է մեկնաբանություններ: Շատ դեպքերում այս կամ այն հարցում տարբեր հարկային և այլ իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկային խնդիրներն ուսումնասիրվում են հարկային մարմինների կողմից, որոնք օրենսդրությամբ լիազորված են հաշվարկել տուգանքներ և տույժեր:
Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը չունի լրացուցիչ հարկային պարտավորություններ և պահուստ չի ձևավորել լրացուցիչ հարկային պարտավորությունների գծով:

Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ Ընկերությունը բավարարում է ՀՀ օրենսրությամբ ներկայացվող շրջակա միջավայրի պահպանության պահանջներին և վստահ է, որ Ընկերությունը չունի շրջակա միջավայրի հետ կապված էական ընթացիկ պարտավորություններ: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ օրենսդրությունը դեռ զարգացման փուլում է և օրենսդրության հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները կարող են ապագայում առաջացնել էական պարտավորություններ: